ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԴԻՄԵԼ Է ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԸՆԴՈՒՆՄԱՆԸ ԱՋԱԿՑԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

05.05.2018 16:46

2018 թվականի հունվարի 24-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը ձայների գերակշիռ մեծամասնությամբ ընդունել է մի հանձնարարական, որը կոչ է անում Նախարարների կոմիտեին մշակել և ընդունել **Փաստաբանի մասնագիտության վերաբերյալ եվրոպական կոնվենցիա**, որը կներառի արդյունավետ վերահսկողական մեխանիզմներ: Մասնավորապես, Վեհաժողովը առաջարկում է ստեղծել վաղ ահազանգման մեխանիզմ փաստաբանների անվտանգության և անկախության և իրենց մասնագիտական գործառույթները արդյունավետորեն կատարելու նկատմամբ անմիջական սպառնալիքներին անմիջապես արձագանքելու համար, լրագրողների պաշտպանության և լրագրողների անվտանգության Եվրոպայի խորհրդի Պլատֆորմի մոդելի հիման վրա:

Այդ առաջարկությունը ստացել է ոչ միայն ՀՀ փաստաբանների պալատի, այլ նաև Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի ԵՓԻՄԽ/CCBE աջակցությունը, որը ներկայացնում է 45 երկրների փաստաբանների միություններ, ավելի քան մեկ միլիոն եվրոպացի փաստաբանների:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը դիմել է ՀՀ արդարադատության նախարարի և ՀՀ արտաքին գործերի նախարարի պաշտոնակատարներին խնդրելով աջակցել այս հավակնոտ նախաձեռնությանը, որի ընդունումը կդառնա մեծ առաջընթաց մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ապահովման հարցում:

Ներբեռնել գրությունը

ՀՀ փաստաբանների պալատի
Մամուլի խոսնակ՝ Ծովինար Խաչատրյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })